

ԱՌԵՂԾՎԱԾԱՅԻՆ ԳՅՈՒՐՋԻԵՎՈ

ՍԵՐԳԵՅ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Սույն հոդվածի նպատակը ոչ թե Գյուրջիկի ուսմունքը մեկնաբանելն է, այլ նրա և իր ուսմունքի ծագումնաբանական ակունքները ներկայացնելը, հարց, որը գյուրջիկագիտության մեջ մինչ օրս հստակ չի պարզաբանվել:

Մարդկության պատմության վերջին տիեզերական տարվա պարբերության (պարբերությունը տևում է մոտ 10 - 12 հազ. տարի) ձմեռային դարաշրջանում (տևում է մոտ 2.5 - 3 հազ. տարի), արտագաղթերի և միջցեղային խառն ամուսնությունների հետևանքով ցեղերին ի վերուստ տրված նախաձևերի (արխետիպերի) ու դիցերի իմաստն այլափոխվեց, և նախնական իմաստությունների ու դիցերի փշրանքների վրա ձևավորվեցին մարդակենտրոն կրոններ (զրադաշտականություն, քրիստոնեություն, մահմեդականություն), իմաստասիրություններ (հին հնդկական, հին չինական, հին հունական...), արվեստներ ու գիտություններ: Եվ, այնուամենայնիվ, աշխարհի տարբեր ծագերում, չնայած «նոր»՝ ձմեռային դարաշրջանի ստեղծած աննպաստ պայմաններին, միշտ էլ եղան մարդիկ, մարդկանց գաղափարական համայնքներ, որոնք փորձեցին տարբեր ձևերով պահպանել, վերականգնել կամ էլ մեծամտության տրվելով՝ իրենցից բխեցնել երբեմնի իմաստությունը, բացարձակ գիտելիքն ու հավատքը: Նման փորձ անողները կոչվեցին հերմետիկներ, միստիկներ, սոփիստներ, էզոթերիկներ (հայերեն՝ գաղտնատեսներ կամ թաքնատեսներ), օկուլտիստներ, թեոսոփիստներ և այլն: Բնականաբար, երբեմնի բացարձակ իմաստության (բացարձակ գիտելիքի) ու հավատքի հայրենիքներից մեկում՝ Չայաստանում, նույնպես նման փորձեր արվել են: Վկան՝ պավլիկյանությունը, հին ու նոր թոնդրակեցիությունները, մինչև 19 - րդ դարի վերջերը տևած արևորոյաց շարժումը, հայ բանասացական ավանդույթները, Արևմտյան Չայաստանում սկիզբ առած և ապա Արևելյան Չայաստանում տարածված «Ցեղին սիրտը» շարժումը, նժդեհյան «Ցեղակրոնությունը», մեր օրերում՝ «Ցեղակրոն շարժումը»... Ավելին, այլ երկրներում հիշատակված նմանատիպ փորձերի ծննդաբանության մեջ խորամուխ լինելու դեպքում դժվար չէ պարզել դրանցից շատերի այս կամ այլ կերպ արտահայտված հայկական ակունքները: Գյուրջիկի ուսմունքը դասվում է հիշյալ փորձերի այն համախմբի մեջ, որը կոչվում է թաքնատեսություն (գաղտնատեսություն):

Բոլոր թաքնատեսներին հատուկ է այն կանխադրույթը, որ տիեզերքում, բնության մեջ և մարդկային կյանքում կան երևացողի՝ էկզոթերիկի տակը, խորքերում թաքնված բացարձակ ուժեր, մարդուն անմիջականորեն անտեսանելի էություններ, որոնք էլ կառավարում են կյանքի այդ ուլորտները: Այդ ուժերն ու էությունները, որոնց համընդհանրությունն ու ամբողջականությունը թաքնատեսներն անվանում են Բացարձակ, իսկ դրա ճանաչողությունը՝ Բացարձակ գիտելիք (իմաստություն), մարդկանց

մեծամասնությամբ, ըստ թաքնատեսների, հասու չէ: Միայն քչերին է ի վերուստ տրված կյանքի բուն իմաստը ճանաչելու, Բացարձակ գիտելիքին հասու դառնալու և, ըստ այդմ, մարդկության մեծամասնությանը կառավարելու գիտակցական պայծառատեսությունը: Թաքնատեսները այդպիսի ընտրյալ փոքրամասնություն համարում են իրենց:

Միասնական լինելով բոլոր թաքնատեսական ուսմունքների հետ այն հարցում, որ թաքնված գիտելիքը (իմաստությունը) տվյալ պահին չբացահայտված գիտելիքն (իմաստությունն) է, Գյուրջիևի ուսմունքը, սակայն, ի թիվս շատ քիչ նմանատիպ ուսմունքների, համարում է, որ ինչ - որ ժամանակ, այնուամենայնիվ, Տիեզերքի, բնության, մարդու մասին եղել է բացարձակ գիտելիք (իմաստություն), որը հետագայում ինչ - ինչ պատճառներով կամ մոռացության է մատնվել, կամ փոխանցվել է հաջորդ սերունդներին աղճատված ու աղավաղված ձևով, կամ էլ փշրված կամ սքողված ձևերով պահպանվել է զանազան մշակութային արժեքներում ու ավանդույթներում (մենք դեռ կխոսենք, թե Գյուրջիևը այս՝ հիմնականում թաքնատեսորեն արտահայտված գաղափարի տակ ինչ նկատի ունի): Գյուրջիևը այդ գիտելիքի բացահայտումը կամ վերականգնումը համարում է զաղտնի «ճշմարտության որոնողների»՝ թաքնատեսների խնդիրը: Ավելացնենք նաև, որ, ըստ Գյուրջիևի, հնագույն թաքնատեսական ուսմունքներում մարդկային կյանքի վերափոխման ուղիները բաժանվում են երեք հիմնական խմբի՝ ֆաքիրի (դերվիշի), ճգնավորի և յոգի¹: «Ֆաքիրի ուղին» ֆիզիկական մարմնի դեմ տարվող պայքարի ուղին է, որի դեպքում մարդու կյանքի զգացմունքային ու մտավոր կողմերը մնում են թերզարգացած: Երկրորդ՝ «ճգնավորի կամ վանականի ուղին» զոհաբերության ուղի է, որտեղ խաղալով ենթակայի զգացմունքների վրա՝ փորձ է արվում նրան հեռու պահել կյանքի լրիվության ապրումից: Երրորդ՝ «յոգայի ուղին, ինտելեկտի ուղին է, որի դեպքում, սակայն, թերզարգացած են մնում մարմինը և զգացմունքները:

Այս ուղիները, սակայն, մարդկային կյանքի վերափոխումի անբնական ուղիներ են, քանի որ դրանցում զանց են առնվում ցեղին ու ազգին ժառանգականորեն տրված հատուկ էությունները: Դրանք մարդուն դարձնում են իրական աշխարհի համար մեռնող (ապաշխարող), տունուտեղը լքող, ազգային դեմք - դիմագիծը ուրացող, կյանքի հաճույքներից, աշխարհիկ գործունեությունից հրաժարվող և անապատ, վանք (եկեղեցի) կամ յոգայի դպրոց մտնող անդեն զանգվածի: Դրանք նաև ուղիներ են, որոնք, ի վերջո, սպանում են մարդուն և արդյունքում, ինչպես նկատում է Գյուրջիևը, մնում են նրա ստվերը, «ապուշ մարդը», «մարդ - մեքենան»: Այդ պատճառով Գյուրջիևը առաջարկում է չորրորդ՝ հասարակությունից մեկուսացում և կյանքի հաճույքներից հրաժարում չպահանջող ուղին: Ավելին, այդ ուղին հնարավորություն կտա մնալ կյանքի սովորական պայմանների մեջ, ապրել սովորական կյանքով և միաժամանակ զբաղվել մարմնի, զգացմունքների ու մտքի կատարելագործման աշխատանքով: Գյուրջիևը իր «ուղու» առանձնահատկությունը տեսնում է նաև նրանում, որ դրանում հաշվի են առնվում մարդու ժառանգականությունը (էությունը), ցեղային առանձնահատկությունները և դրանցից բխող հնարավորությունները, այսինքն՝ յուրաքանչյուրը կարող է անել այն, ինչ իրեն անհրաժեշտ է և չանել այն, ինչ անօգուտ ու վնասակար է:

¹ См у Гурджиев Г. И. Беседы с учениками. Киев, 1992:

Այսպիսով, Գյուրջիկի ուսմունքն ունի կենսապաշտական ու գործնական ուղղվածություն, քանի որ մարդուն չի հրաժարեցնում կյանքից, ինչպես մյուս ուղի մշակողները, այլ փորձում է կյանքի մեջ, կյանքի միջոցով և հանուն կյանքի վերափոխել մարդկային գիտակցությունն ու կյանքը: Այլ կերպ ասած՝ Գյուրջիկը կենսապաշտ է և մարդու կատարելագործումը չի կապում կույր հավատքի (կրոնի), մարմնասպան վարժանքների, ինչպես նաև հոգևոր ու ֆիզիկական զրկանքների պարտադրանքների հետ:

Թաքնատեսության երևելի հետազոտողներն ու մշակութաբանները Գյուրջիկի հայտնությունը համարում են 20-րդ դարի առեղծվածային ֆենոմենը՝ նրան համեմատելով առաջին դարում մոգ - հրաշագործի համբավ ձեռք բերած Ապոլլոն Թիանացու և Գյոթեի հայտնի պոեմի համար նախատիպար ծառայած Յոհան Ֆաուստի (1480 - 1540) հետ²:

Ուրիշները Գյուրջիկին համեմատում են Նիցշեի հետ՝ գտնելով, որ նա Նիցշեին բնավ չզիջող մի հոյակապ ու զարմանալի մտածող է: Գյուրջիկին հատկապես մեծարել են նրա խորհրդավոր անհատականության հետ շփվող ականատես աշակերտները: Նրանք իրենց ուսուցչին համարել են 20 - րդ դարի մեծագույն իմաստուններից մեկը: Այսպես, օրինակ, նրանցից մեկը գրում է. «Ավելի շատ նման լինելով ձեն բուդայականության պատրիարքին կամ Սոկրատեսին, քան հայտնի քրիստոնեական միստիկին, Գյուրջիկն իրեն իմացողների շրջապատում ուներ մարդկանց «արթնացնելու» անգերազանցելի շնորհով օժտված մարդու համբավ: Նա Արևմուտք բերեց թաքնատեսական գիտելիքի համընդգրկուն մի մոդել...»³:

Այլուրեք մեծ հռչակ ձեռք բերած (ու բերող) Գյուրջիկը Հայաստանում, սակայն, մնում է դեռևս անհայտ:

Օտարազն գյուրջիկագետները փաստում են, որ թաքնատեսը ծնվել է Գյումրիում (Ալեքսանդրապոլում) 1873/1880 թթ., մոր կողմից հայ է (հայրը, ըստ տարածված կարծիքի, հույն է), սկզբնական կրթությունը ստացել է Կարսի դպրոցում, նրա հայացքների ձևավորման վրա անջնջելի հետք է թողել ընտանեկան դաստիարակությունը, նրա գործերի բնօրինակները հայերեն են և այլն:

Գյուրջիկի կենսագրությունը, կյանքի մանրամասներն ու նախնիների ով լինելը մշուշապատ են, ընդ որում, ինչ - ինչ նկատառումներից ելնելով, ինքը՝ թաքնատեսն էլ է դրան նպաստել: Ինչպես վերը նկատվեց, ըստ Գյուրջիկի կենսագիրների՝ նա մոր կողմից հայ է, իսկ հոր կողմից՝ հույն: Որպես թե նրա հայրը, ի թիվս այլ հունական ծագում ունեցող Գյուրջիկների, Ալեքսանդրապոլ է գաղթել վրացական խալկա լճի շրջակայքից: Սակայն Գյուրջիկի կենսագրության մանրամասները հետազոտող հայազգի մասնագետները, ուսումնասիրելով արխիվային փաստաթղթերը, պարզել են, որ մինչ օրս Վրաստանի խալկա լճի շրջակայքում և Հայաստանի հյուսիսային մասերում բնակվում են շատ հայեր, որոնք կոչվում են «ծաթ հա-

² Ст'ю Алексахин В. Путешествие в настоящее. Послесловие. В кн.: Гурджиев Г. И. Жизнь реально только тогда, когда "Я есть". СПб., 1996, էջ 174 - 175:

³ Зальцман де М., Гурджиев Г. И. // Международный журнал Гурджиева. М., 2002, с. 20.

յեր»⁴: Նրանց նախնիները, ինչպես նաև Գյուրջիկների տոհմը, Կապադովկիայի հունադավան, այսինքն՝ քաղկեդոնական ուղղափառ հայեր են եղել: Այլ խոսքով՝ հետազոտողները Գյուրջիկին հոր կողմից ևս հայ են համարում՝ ունենալով դրա համար լուրջ հիմքեր: Բանն այն է, որ ազգային պատկանելության հարցում հիմք ընդունելով կրոնական դավանանքը՝ Հայ առաքելական եկեղեցու հետևորդներից բացի մյուսներն ավանդաբար համարվել են ոչ հայեր: Ըստ այդմ, հայ ծաթերը, լինելով ի բնե հայ (հայ պատմագրության մեջ այս պնդումը ըստ ամենայնի հիմնավորված է Ն. Ադոնցի կողմից⁵), բայց քաղկեդոնական դավանանքի հետևորդ, եկեղեցու և մասամբ նաև առաքելական հայերի կողմից «դուրս են գրվել» հայության ազգագրական մատյաններից ու համարվել հույն: Փաստորեն, նույն բախտին են արժանացել նաև ծաթ Գյուրջիկները:

Պատմաբանները պարզել են, որ 17 - րդ դարում Արևմտյան Հայաստանում վերականգնվեց, հասկանալի է՝ ծպտված ձևով, Արևորդաց կամ Թոնդրակեցիության շարժումը, որը ստացավ Նոր Արևորդիություն (Թոնդրակեցիություն) անունը: Արևորդիներն ունեին իրենց ազգային՝ առաքելականից էապես տարբերվող հավատքը, որն անվանում էին «մաքուր հավատք», և այդ հավատքի սուրբ գիրքը՝ «**Բանալի ճշմարտության**»⁶:

Այս առումով պատմական մի փաստ հիշենք: Վերլուծելով 19 - 20 - րդ դարերի Արևմտյան Հայաստանի ազգապատկերը՝ պատմաբանները թուրքերի, հայերի, քրդերի... կողքին նշում են նաև *գյուրջիկների* ազգը, որի անդամները, ենթադրելի է, Արևորդաց հավատամքը շարունակող հայերն են եղել:

Արևմտյան Հայաստանում ձևավորված Նոր Արևորդիության մի ճյուղը հետագայում տարածվեց Արևելյան Հայաստանում, մի ճյուղն էլ՝ նրան սահմանակից վրացական Խալկայի շրջանում: Մինչև 19 - րդ դարի վերջերը Արևորդաց համայնքը Գյումրիում գոյություն է ունեցել, պարզ է՝ ոչ բացահայտ: Հետո Նոր Արևորդիների հետքերը Գյումրիից վերանում են, համենայնդեպս, հայ պատմագրության մեջ նրանց մասին այլևս չի հիշատակվում: Կարծում ենք՝ Գյումրիում հաստատված Գյուրջիկները եղել են Նոր Արևորդաց շարժման հետևորդներ և ապրել են Արևորդաց հավատքին բնորոշ համայնքային կյանքով, ծեսերով, կենցաղով և այլն: Այդ մասին են վկայում Գյուրջիկի կյանքն ու գործունեությունը, նրա ստեղծած Արևապաշտությամբ առլեցուն ուսմունքը (հավատամքը), որը ոչ մի կապ չունի իր ժամանակներում իր շուրջը լեփ - լեցուն «քնած» հայի կրոնական աշխարհընկալման հետ: Ասվածը հիմնավորենք:

Գյուրջիկի առաջին ուսուցիչը, որը ոչ միայն մեծ ազդեցություն է ունեցել նրա կյանքի, այլև աշխարհայացքի ձևավորման վրա, եղել է, ինչպես ինքն է վկայում, իր հայրը: Իվան Գյուրջիկը՝ աշուղ Ադաշը (Գյումրիում եր-

⁴ Ծաթ հայերի մասին տե՛ս Գալուստ Տեր-Մկրտչյանի ուսումնասիրությունը (**Գ. Տեր-Մկրտչյան**, Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Ա, Եր., 1979, էջ 482 - 483):

⁵ Տե՛ս Ն. Ադոնցի «Հայ - Ծաթերի ծագման մասին» ուսումնասիրությունը (**Նիկողայոս Ադոնց**, Երկեր, հ. Ա, Եր. 2006, էջ 535 - 540):

⁶ Տե՛ս Թադ. Ավդալբեկյանի «Անհայտ աղանդավորներ հայոց մեջ ժՁ ու ժԷ դարերում» ուսումնասիրությունը (**Թ. Ավդալբեկյան**, Հայագիտական հետազոտություններ, Եր., 1969, էջ 193 - 211):

բեմն այդպես են անվանում անվանակցին), աշխարհ տեսած, ուսյալ, բազմաշնորհ մարդ էր: Նա մշակույթների, ավանդույթների, ժողովրդական հեքիաթների և առասպելների մի ամբողջ շտեմարան էր: Հրաշալի բանասաց էր, ինչի շնորհիվ էլ փոքրիկ Գեորգիի մանկության աշխարհը ողողված էր հեքիաթներով, զրույցներով ու առասպելներով: Հայրը այնպես էր հրամցնում հայ և այլ ազգերի բանահյուսությունը, որ տղան արդեն պատանի հասակում մեծ ցանկություն ուներ «հանդիպելու» առասպելական աստվածներին ու հերոսներին: «Հայրս, - գրում է Գյուրջիևը, - շատ պարզ ու որոշակի հայացքներ ուներ մարդկային կյանքի ու նպատակների մասին: Նա հաճախ էր կրկնում այն միտքը, որ յուրաքանչյուր մարդու հիմնական ձգտումն է ձեռք բերել ներքին ժառանգական էությանը պայմանավորված ազատություն և նախապատրաստվել երջանիկ ծերության: Այդ նպատակին մարդը կարող է հասնել, եթե միայն մանկուց սկսած յուրացնի հետևյալ պատվիրանները. առաջին՝ սիրի՛ր ծնողներիդ, երկրորդ՝ միշտ մնա՛ հասարակ, երրորդ՝ հարգալից եղի՛ր ամենքի հանդեպ առանց խտրականության, բայց միևնույն ժամանակ ներքնապես մնա՛ անկախ և երբեք մի՛ վստահիր ոչ մեկին, չորրորդ՝ սիրի՛ր աշխատանքը հանուն աշխատանքի, այլ ոչ թե հանուն այն բանի, որ այն եկամուտ է բերում»⁷: Իսկ այն հոգևոր աշխարհը, որ աշուղ Ադաշը փոխանցում էր իր որդուն՝ Գյուրջիևին, հայ ազգային ավանդույթներով հարուստ էր, որը պահելուն ու սերունդներին փոխանցելուն էին կոչված հայ Արևորդիները:

Այն, որ Գյուրջիևները ապրում էին հատուկ՝ ազգային հավատքով պայմանավորված համայնքային կյանքով (որի քուրայով էր անցնում պատանի Գյուրջիևը), վկայում է մի փաստ: Թաքնատեսը պատմում է, որ Ալեքսանդրապոլին կից Ջաջուռ գյուղում կար մի՝ հնագույն ժամանակներից պահպանված ոչ քրիստոնեական սրբատեղի, ուր տոն օրերին Գյուրջիևները և տեղացիները ընտանիքներով հաճախ ուխտի էին գնում: Հերթական ուխտագնացությանը մասնակցում է նաև մի անդամալույծ երիտասարդ: Սրբատեղին գտնվում էր բարձունքի վրա: Երբ ուխտագնացների խումբը հասնում է լեռան ստորոտին, անդամալույծ երիտասարդը պահանջում է իրեն չօգնել, և ինքը միայնակ, սողալով, մի կերպ հասնում է սրբատեղի: Տեղի է ունենում հրաշք. նա ոտքի է կանգնում, համոզվում, որ ոտքերը բուժվել են, և ուրախությունից սկսում է թռչկոտել: Ուխտագնացները, այդ թվում՝ պատանի Գյուրջիևը, ցնցվում են: Անշուշտ, ուխտավորները քրիստոնյա հայեր չէին (նրանց միշտ «աստված է փրկում»...), այլ հայ Արևորդի հեթանոս հավատավորներ, որոնց համար Արարչի՝ ամեն հայի տված ուժը պետք է ընդամենը բորբոքել ու... «փրկվել»:

Թեև Գյուրջիևը մեծանում էր ազգային ավանդույթներով ապրող մարդկանց շրջապատում, և դա հետագայում ձևավորված նրա ուսմունքի համար յուրահատուկ աուրայի դերակատարում ունեցավ, բայց, միաժամանակ, նա գիտակցում էր, որ իրեն փոխանցված այդ ավանդույթները տակավին թերի են, դրանցում հնագույն շատ բացարձակ գիտելիքներ ու հավատալիքներ կորսված կամ ժամանակների անբարենպաստ պայմանների բերումով այլափոխված են: Չնայած իր ապրած արգասաբեր հոգևոր միջավայրի առկայությանը, այնուամենայնիվ կային հարցեր, որոնք մտա-

⁷ Гурджи́ев Г. И. Встречи с замечательными людьми. М., 1994, с. 42.

տանջում էին նրան, և նա դրանց պատասխանները գտնելու ուղիներ էր փնտրում: Որոշումների այդ ճանապարհին նա հավատակից ու գաղափարակից մի խումբ ընկերների հետ 1895 թ. Ալեքսանդրապոլում ստեղծում է «Ճշմարտության որոնողներ» միությունը: Նրանք, փաստորեն, Տիրի հնագույն մեդիանի նորոյա հավատավորներ էին: Միության մյուս անդամները նույնպես իրենց նվիրել էին Տիեզերքի ու Մարդու մասին հնագույն ճշմարիտ գիտելիքների ու հավատալիքների որոնմանը (այս ընկերությունը, կարելի է ենթադրել, Նոր Արևորդիության նորագույն տարբերակն էր): Թաքնատեսական այդ միության անդամները այն համոզմունքն ունեին, որ ինչ - որ ժամանակ գոյություն են ունեցել մեկ համաշխարհային հոգևոր մշակույթ, լեզու, տիեզերքի և մարդու կյանքի իմաստի վերաբերյալ ճշմարիտ գիտելիքների համակարգություն, որի մասերը հետագայում ժառանգել են Արևելքի երկրների ազգերը. փիլիսոփայությունը բաժին է ընկել Յնդկաստանին, տեսությունը՝ Եգիպտոսին, իսկ պրակտիկան՝ Պարսկաստանին, Միջագետքին ու Չինաստանին: Միության անդամները ենթադրում էին, որ փնտրվող բացարձակ գիտելիքը, ավելի ստույգ՝ դրա մասերը, այնուամենայնիվ թաքնված են ինչպես այդ գիտելիքի հայրենիքի, այնպես էլ նրա գնացած երկրների հնագույն առասպելների, լեգենդների, զանազան խորհրդանիշների, երաժշտությունների, պարերի, ավանդույթների, սովորույթների, անգամ կենցաղի մեջ:

Ստեղծելով «Ճշմարտության որոնողների» միություն՝ Գյուրջիևը նպատակ ուներ համատեղ ջանքերով վերականգնել նախնի բացարձակ գիտելիքը: Եվ այդ առումով ոչ քիչ ձեռքբերումներ եղան: Կարելի է ասել նույնիսկ, որ «Ճշմարտության որոնողների»՝ Յայաստանում գործելու ընթացքում (1895 - 1900 թթ.) դրվեցին ապագա «չորրորդ ուղու» գյուրջիևյան ուսմունքի հիմքերն ու հենասյուները:

«Ճշմարտության որոնողները», իրենց հասանելի բանավոր ու գրավոր աղբյուրներում ոչ լիովին գտնելով թաքնված գիտելիքը, որոշում են այդ պակասը փնտրել կորուսյալ ու մոռացված աղբյուրներում: Գյուրջիևը միության անդամներից մեկի՝ Սարգիս Պողոսյանի (թաքնատեսական անունը՝ Միստր Իքս) հետ, որին նա անվանում է իր տեսած նշանավոր մարդկանցից մեկը, մասնակցում է Անիի՝ Մառի գլխավորած պեղումներին: Պեղումների ժամանակ հայտնաբերվում է «Սարմունգ եղբայրության» (սարմունգը, ըստ մասնագետների, պարսկերեն բառ է և նշանակում է թռչունների թագավոր. ըստ երևույթին նկատի է առնվում Յազարան հավաքը)՝ իմաստունների միաբանության հին ձեռագրերը: Այդ ձեռագրերի լեզվի մասին Գյուրջիևը նշում է, որ դրանք գրված են եղել մի լեզվով, որը թվում է, թե հայերեն էր, բայց իրենց անհայտ հայերեն: «Ես հայերեն թեև լավ գիտեմ, - գրում է նա, - բայցևայնպես մենք ոչինչ չկարողացանք հասկանալ այդ գրությունից, քանի որ դա շատ հին հայերեն էր»⁸: Թաքնատեսը գրաբար լավ գիտեր, հետևաբար այդ «շատ հին հայերենը» գրաբար չի եղել, այլ, ենթադրելի է, նախամաշտոցյան հայերեն: Ի դեպ, սա նախամաշտոցյան հայերեն գրերի գոյության մասին ևս մեկ փաստարկ կարող է ծառայել: Մի քանի օր ուսումնասիրելով ձեռագրերը՝ Գյուրջիևը հանգում է այն ենթադրության, որ «Սարմունգը» հնագույն թաքնատեսական մի նշա-

⁸ Там же, с. 88.

Նավոր դպրոցի անուն է, որն ըստ ավանդության հիմնադրվել է Բաբելոնում՝ մեր թվարկությունից 2500 տարի առաջ (եթե դա այդպես է, ապա կարելի է ենթադրել, որ այդ դպրոցը առաջացել է Գիլգամեշի՝ Չայկական լեռնաշխարհից տարած գաղտնի գիտելիքների հիման վրա): Շատ բան ասող է ձեռագրերի մասին Գյուրջիկի հայտնած մեկ այլ տեղեկությունն է. ըստ նրա՝ գտնված գրքերից մեկը կոչվել է «Merk havat», որը, դժվար չէ ենթադրել, հայերենի «մերկ հավատ» (նշանակում է՝ մաքուր, գտարյուն հավատ) բառակապակցությունն է: Գտնված ձեռագիրը Գյուրջիկին օգնում է անել ևս մեկ ենթադրություն. եթե «Սարմունգը» հին բաբելական թաքնա-տեսական ինչ - որ միաբանություն է եղել, ապա նրա լեզուն՝ հին հայերենը, բուն գաղտնի գիտելիքի լեզուն է եղել (բաբելոնյան աշտարակաշինությունը այդ ժամանակ դեռևս տեղի չէր ունեցել, և, հետևաբար, սեմական լեզուները դեռևս չէին «բաժանվել» մայր՝ արիական լեզվից):

Համոզվելով, որ նախնի ամբողջական գիտելիքը և դրա մասերը այլ երկրներում պետք է փնտրել, Գյուրջիկը 1900 - ական թվականներին Հայաստանից դուրս է գալիս և ուղևորվում արևելք, հետո՝ արևմուտք («Արևելքից վերցրու ըմբռնումը, իսկ Արևմուտքից՝ գիտելիքը...», - ասում է նա): Լինում է աշխարհի այդ կողմերի շատ երկրներում: Միջին Ասիայի ամենաանմատչելի լեռներում՝ Աֆղանստանի տարածքում, նա գտնում է հին Բաբելոնում հիմնադրված «Սարմունգի»՝ աշխարհից մեկուսացված հետևորդներին: Այստեղ Գյուրջիկը ուսանում է զանազան դպրոցներում, ուսումնասիրում ժամանակի հայտնի ու անհայտ շատ կրոններ, հավատքներ, փիլիսոփայություններ: Մահմեդական կրոնի գաղտնագիտական ճյուղին՝ սուֆիզմին, նա ծանոթանում է Նակղբեթ սուֆիստական դպրոցում:

Համաձայն որոշ տեղեկությունների՝ Գյուրջիկը եղել է Դալայ - Լամայ հոգևոր կենտրոնի սանը, ուսումնասիրել հնագույն ձեռագրեր, կարևոր ֆինանսական պաշտոն է զբաղեցրել տիբեթյան իշխանության օրոք: Ըստ այլ տեղեկությունների՝ թաքնատեսը կապեր է ունեցել Ստալինի հետ, ով, որպես թե, նրա՝ Թիֆլիսում կարդացած դասախոսություններին ներկա է եղել: Մեկ այլ տեղեկության համաձայն՝ 1920 - ականներին Բեռլինում եղած ժամանակ Գյուրջիկը կապեր է հաստատել արիաստֆիստների և թեոստֆիստների հետ և, ենթադրվում է նաև, որ հիպնոսի դասեր է տվել «երրորդ ռեյխի» ապագա ֆյուրերին՝ Հիտլերին: Հետաքրքիր է, որ որոշ աղբյուրներում թաքնատեսը հիշատակվում է որպես ռուսական գաղտնի գործակալ, ինչը, պարզ է, չի համապատասխանում իրականությանը:⁹ Ըստ էության՝ Գյուրջիկը, իր ծագումի առաքելությամբ պայմանավորված, այլ աշխարհներ Հայաստանից ուղարկված այն պատգամավորը կամ գործակալն էր, որին վիճակված էր մայր՝ բացարձակ գիտելիքային առանցքի շուրջը հավաքել այդ աշխարհներում ցրված երբեմնի բացարձակ գիտելիքի մասերը: Որը և նա արեց:

Գյուրջիկագետներին, Գյուրջիկի աշակերտներին շատ է հետաքրքրել նրա ուսմունքի բուն աղբյուրների հարցը (նրանք պարզ տեսնում էին, որ նրա «չորրորդ ուղին» ոչ մի «ուղու» էլ ըստ էության նման չէ): Որտեղի՞ց է նա իր ուսմունքը վերցրել. այս հարցի պատասխանը այդպես էլ մինչև

⁹ Թաքնատեսի կենսագրության մասին հիշյալ տեղեկությունները քաղել ենք Վ. Ալեքսախիմի վերը հիշատակված ուսումնասիրությունից (տես էջ 187 - 188):

այսօր մնում է անորոշ: Ի դեպ, ինքը՝ Գյուրջիկն էլ, ելնելով ինչ - ինչ նկատառումներից, այդ հարցի պատասխանը չի տվել: Այսպես՝ գյուրջիկագետներից մեկը թաքնատեսին հարցնում է. «Մի՞թե Համակարգը Ձերը չէ»: Նա պատասխանում է. «Ո՛չ»: Հետևում է՝ «Այդ դեպքում որտեղի՞ց եք այն գտել, որտեղի՞ց եք վերցրել»: Գյուրջիկը կատակով պատասխանում է. «Հնարավոր է ես այն գողացել եմ...»¹⁰: Գյուրջիկի աշակերտ Պ. Ուսպենսկին ևս վկայում է, որ ինքը «օրը 10 անգամ» Գյուրջիկին հարցրել է «համակարգի ծագման մասին», բայց նա «միշտ տարբեր պատասխաններ» է տվել: Ինքը՝ Ուսպենսկին, ստիպված է լինում եզրակացնելու, որ Գյուրջիկի ուսմունքը «անհայտ մի ուսմունքից հատվածներ է»: Ոմանք էլ համարում են, որ Գյուրջիկի ուսմունքի որոշ կողմեր երկրային ծագում ունենալ չեն կարող. կամ նրան հայտնի էր այն, ինչ տրվում է միայն մարգարեներին, կամ նա կապ էր պահպանում գերբնական կարգի ինչ - որ դպրոցի հետ: Այլոց կարծիքով էլ, նրա ուսմունքը կամ նրա համճարի ծնունդն էր, կամ էլ դա ընդամենը մի օղակ էր գաղտնի գիտելիքների փոխանցման շղթայում:

Հայտնի թաքնատես Ջ. Բենետի կարծիքով, «Գյուրջիկն ուներ պատմական առաքելություն, որը կապված էր մարդկության կյանքում ավանդական գիտելիքի դերի վերականգնման հետ»¹¹: Գյուրջիկի ուսմունքի ծագումնաբանության վերաբերյալ մեր կարծիքի ձևավորման առումով առանձնապես կարևոր է գյուրջիկագետ Ռ. Լեֆորտի արտահայտած տեսակետը. «Ես չեմ հավատում, որ Գյուրջիկն ինքն է հորինել այն, ինչ սովորեցնում է: Ես համոզված եմ, որ ինչ - որ տեղ եղել են մարդիկ, որոնք սովորեցրել են նրան և պատվիրել են սովորեցնել: Այդ ուսմունքն ունի իր ճշմարիտ աղբյուրը, որից սկիզբ է առել և հետագայում անհատական ստեղծագործության արդյունքում զարգացվել է Գյուրջիկի կողմից»¹²: Գյուրջիկագետը միանգամայն ճիշտ է (ավստոս, որ նա չի որոշակիացնում իր այդ ճիշտը): Գյուրջիկն ինքը չի հորինել (կամ ստեղծել) այն ուսմունքը, որը, ի տարբերություն այլ ուսմունքների, անվանեց «չորրորդ ուղի»: Այդ ուսմունքի հիմունքները, ինչպես նաև դրա գլխավոր հենասյուները, կոնկրետացնելով Գյուրջիկագետի ասածները՝ ավելացնենք, նրան տվել էին այն աշխարհը, դարեդար նրան փոխանցված այն ավանդույթները, որոնց ծնունդն էր նա: Բացի այդ՝ Գյուրջիկն ուներ ծագումնաբանական՝ ժառանգական մի որակ, ըստ որի՝ աշխարհը պետք է արտացոլվեր ու նորովի արարվեր հենց այնպես, ինչպես տեսնում ենք «չորրորդ ուղի» - ում:

Գյուրջիկի ամբողջական ուսմունքի (դրա առանձին տարրերի)՝ հայ գեներից, հայ ազգային բանավոր ու գրավոր ավանդույթներից, հավատքից, դիցաբանությունից, աշխարհընկալումից, մշակույթից... ծագումնաբանության ամբողջական ցուցադրումն արդեն այլ հարց է:

¹⁰ Գյուրջիկի ուսմունքի ծագման մասին մանրամասը տես **Муравьев Б.** Гносиз. Т. 1 - 3, <http://fourthway.narod.ru/lib/>

¹¹ Տես **Беннет Д. Ж.** Учителя мудрости, <http://fourthway.narod.ru/lib/>

¹² **Лефорт Р.** Учителя Гурджиева. М., 1993, с. 83.

СЕРГЕЙ МАНУКЯН – *Загадочный Гурджиев.* – Г. Н. Гурджиев – один из крупных мыслителей XX века. Его учение – оригинальный феномен в истории эзотеризма. Исследования его жизни и деятельности, духовных и культурных предпосылок его учения и особенностей творчества показывают, по мнению автора, что в основе как его личности, так и созданного им учения лежат армянский генезис и характер. Система Гурджиева восходит к разного рода старинным армянским традициям и верованиям, обогащённым другими традициями и верованиями. Творческое переосмысление этого конгломерата и явилось основой его своеобразного синтетического учения.

SERGEY MANUKYAN – *Mysterious Gjurdgiev.* - G. N. Gjurdgiev, one of the outstanding thinkers of the 20th century, is famous in history for his unique doctrine of esotericism. His life research, the spiritual and cultural basis of his studies, and the peculiarities of his work demonstrate that both he and his works are Armenian by their nature and origin. Gjurdgiev's system based on ancient Armenian traditions and beliefs, as well as enriched with other traditions and beliefs, underlies his unique synthetic study.